# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

makqolin-Ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/40-ՎԼ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | - | Կոնտեյներային ավտոլցակայան, որը պետք է համապատասխանի հետևյալ բնութագրերին. Ռեզերվուարը պետք է լինի հորիզոնական, երկպատ, վերգետնյա, 4 մ³ ծավալով, բաժանված 2 խցիկի՝ 3 և 1 մ³, պատրասված Cт3 տիպի պողպատից, պատերի հաստությունը՝ 4 մմ: Միջպատային տարածությունը պետք է լինի հերմետիկացված և լցված ազոտով: Ռեզերվուարը՝ պետք է լինի հագեցած միջպատային տարածության հերմետիկության վերահսկման համակարգով: Կոնտեյներային ավտոլցակայանը պետք է հագեցած լինի սպասարկման դիտահորով, հենարաններով, մետաղական աստիճանով և սպասարկման հարթակով: 1.Պետք է ունենա. 1.1. Էկոլոգիական տակդիր՝ վառելիքաբաշխիչ աշտարակի և լցավորման պոմպի տակ՝ թափված հեղուկը հավաքելու համար: 1.2. Խցիկ՝ դատարկման հանգույցի համար՝ դռներով և ալյումինե հատակով: Խցիկ վառելիքաբաշխիչ աշտարակի համար՝ դռներով և ալյումինե հատակով: 1.3 Կմախք (կարկաս)՝ պատրաստված մետաղական պրոֆիլավորված խողովակներից, երեսպատված 50 մմ հաստության փրփրապոլիուրեթանային սենդվիչ-պանելներով (նախընտրելի գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ): 2. Կոնտեյներային ավտոլցակայանը ներառում է. 2.1. Բեռնաբարձման օղակ՝ 4 հատ: 2.2. Հենարանային տակդիր՝ 4 հատ: 2.3. Դիտահոր՝ 800 մմ կափարիչով՝ 2 հատ: 2.4. Արտաքին աստիճան՝ 1 հատ: 2.5. |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Սպասարկման հարթակ ցանկապատով (բազրիքով)՝ 1 հատ: 3. Լցավորման գիծ. 3.1. Խողովակաշար ДУ80 տիպի՝ 2 հատ: 3.2. Լողանային անջատիչ փական КОП-80 տիպի՝ 2 հատ: 3.3. Կրակապահպանիչ ОП-80 տիպի՝ 2 հատ: 3.4. Հետադարձ փական КО-80 տիպի՝ 2 հատ: 3.5. Գնդավոր փական КШФ-80 տիպի՝ 2 հատ: 3.6. Լցավորման հանգույց УН-80 տիպի՝ 2 հատ: 4. Բաշխման գիծ. 4.1. Վառելիքի բաշխման կայան՝ 1 տեսակի վառելիքի համար, որն ունի ներծծող հիդրավլիկա, լուսադիոդային կամ հեղուկ բյուրեղային ինդիկացիայով էկրան, 500մմ ճկափողի երկարություն, ավտոմատ անջատիչ փականով լիցքավորման ատրճանակ, 220 Վ աշխատանքային լարում, 50լ/րոպե արտադրողականություն - 2 հատ: 4.2. Խողովակաշար ДУ40 տիպի՝ 2 հատ: 4.3. Հետադարձ փական ОКН-40 տիպի՝ 2 հատ: 4.4. Կրակապահպանիչ ОП-50 տիպի՝ 2 հատ: 4.5. Գնդավոր փական КШФ-40 տիպի՝ 2 հատ: 5. Օդահեռացման / Դեաէրացիայի գիծ 5.1. Խողովակաշար ДУ50 տիպի՝ 2 հատ: 5.2. Ծնչառական փական СМДК-50 տիպի՝ 2 հատ: 6. Չափիչ սարքավորում 6.1. Ճյուղախողովակ (Պատրուբոկ) ДУ80 տիպի՝ 2 հատ: 6.2. Չափիչ դիտահոր ЛЗ-80 տիպի՝ 2 հատ: 6.3. Ծալովի հովանոց՝ ծխնիների վրա՝ 2 հատ: 6.4. Չափաձող МШС-3,5 տիպի՝ 1 հատ (կից լրակազմում): 7. Նստվածքազատման գիծ ДУ-40 տիպի՝ կափարիչով՝ 2 հատ: 8. Հրդեհաշիջման ինքնավար համակարգ՝ 2 հատ: 9. Էլեկտրական կառավարման վահանակ «Ex» տիպի, պայթյունապաշտպան: 10. Լեդ / Լուսադիոդային լուսատու «Ex» տիպի, պայթյունապաշտպան՝ 2 հատ: 11. Տրամաչափարկման (կալիբրավորման) աղյուսակ (երկրաչափական մեթոդ): 12. Թույլտվական փաստաթղթերի փաթեթ, արտադրանքի անձնագիր: Չափսերը՝ ոչ ավել, քան՝ 3000 × 2400 × 2550 (բարձրություն) մմ, զանգվածը՝ ոչ ավել, քան 5000 կգ: Տեսքը՝ համաձայն էսքիզ N 1-ի: Երաշխիք՝ 12 ամիս՝ մատակարարի կողմից գործարկման-կարգաբերման աշխատանքների անցկացման օրվանից: Ավտոլցակայանի առավելագույն օգտագործվող հզորությունը՝ 5 կՎտ: Վառելիքի հաշվառման/չափման թույլատրելի սխալանքը՝ 0,25%: Ավտոլցակայանը պետք է համապատասխանի հակահրդեհային անվտանգության և էկոլոգիական գործող բոլոր նորմերին: Բոլոր վերոնշյալ չափերի շեղումները՝ ±5 %: Տեխնիկական բնութագրում նշված բոլոր դետալների և (կամ) հանգույցների անվանումները ներկայացված են որպես կողմնորոշիչ տիպային անալոգ: Նմուշը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

makqolin в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/40-ՎԼ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |